ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անշարժ գույքի կառավարման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Անշարժ գույքի կառավարման վարչություն				
1	վարչության պետ	1	346000		346000
2	վարչության պետի տեղակալ	1	322000		322000
-	**Շենքերի, շինությունների, ոչ բնակելի տարածքների հաշվառման և կառավարման բաժին**				
3	բաժնի պետ	1	291000		291000
4	գլխավոր մասնագետ	2	225000		450000
5	առաջատար մասնագետ	1	219000		219000
6	առաջին կարգի մասնագետ	3	207000		621000
-	**Հողի ընթացիկ հաշվառման և հողօգտագործման բաժին**				
7	բաժնի պետ	1	291000		291000
8	գլխավոր մասնագետ	2	225000		450000

9	առաջատար մասնագետ	1	219000		219000
10	առաջին կարգի մասնագետ	3	207000		621000
-	**Հողօգտագործման պայմանագրերի կնքման, հաշվառման և վերահսկողության բաժին**				
11	բաժնի պետ	1	291000		291000
12	առաջատար մասնագետ	1	219000		219000
13	առաջին կարգի մասնագետ	3	207000		621000
14	երկրորդ կարգի մասնագետ	1	201000		201000
-	**Անշարժ գույքի համարակալման, հաշվառման և վերլուծության բաժին**				
15	բաժնի պետ	1	291000		291000
16	գլխավոր մասնագետ	1	225000		225000
17	առաջատար մասնագետ	1	219000		219000
18	առաջին կարգի մասնագետ	4	207000		828000
	ԸՆԴԱՄԵՆԸ	29			6725000

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Վերահսկողության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Վերահսկողության վարչություն				
1	վարչության պետ	1	346000		346000
2	վարչության պետի տեղակալ	1	322000		322000
3	գլխավոր մասնագետ	11	250000		2750000
4	առաջատար մասնագետ	6	225000		1350000
5	առաջին կարգի մասնագետ	3	219000		657000
6	գործավար	1	164000		164000
	ԸՆԴԱՄԵՆԸ	23			5589000

3) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «454» և «111542300» թվերը փոխարինել համապատասխանաբար «479» և «117314300» թվերով.

4) «Ամբողջը» տողում «2005» և «437960100» թվերը փոխարինել համապատասխանաբար «2030» և «443732100» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության աշխատանքների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքով.

Վարչության նպատակը Երևանի քաղաքապետին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների վերահսկման ապահովումն է, որն ըստ ոլորտների արդյունավետ իրականացնելու համար առաջանում է լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտություն, որոնց ավելացումը պայմանավորված է.

Երևանի ենթակայությամբ հանրակրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական ապահովության, առողջապահության և այլ ոլորտներում գործող 486 առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, 32 կառուցվածքային և 13 առանձնացված ստորաբաժանումներում (ընդամենը՝ 531), ինչպես նաև քաղաքաշինական ոլորտի վերաբերյալ ստացվող դիմում-բողոքների ուսումնասիրություններ կատարելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում իրականացնել տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, ռիսկերի գնահատման գործառույթներ, ինչպես նաև՝ իրականացնել տեղատեսություն, լուսանկարման աշխատանքներ և այլն:

Վարչությունն իրականացնում է Երևան համայնքի բյուջեով նախատեսված ծախսերի կատարման, ինչպես նաև հատուկ և նպատակային հիմնադրամներից տրամադրվող միջոցների իսկության, նպատակայնության և արդյունավետության (ներառյալ գնումների գործընթացի նկատմամբ հսկողություն), Երևանի բյուջեի եկամուտների հավաքագրման նկատմամբ վերահսկողություն:

Հաշվի առնելով, որ գործող հաստիքացուցակով վերահսկողության վարչությունը համալրված է 8 աշխատակիցներով (որոնցից 5 մասնագետ), իսկ նման քանակով հնարավոր չէ ապահովել վերոհիշյալ աշխատանքների ծավալը, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է վարչությունը համալրել ևս 15 մասնագետներով:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությունում հաստիքների ավելացումը պայմանավորված է հետևյալով.

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման համաձայն՝ Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի միավորներին հասցեներ տրամադրելու լիազորությունը վերապահվել է Երևանի քաղաքապետին:

Մինչ 2018 թվականի ավարտը հասցեավորման գործընթացը իրականացվում էր մրցույթով, որի արդյունքում ծառայություններ էին ձեռք բերվում, և Երևանի քաղաքապետարանը հանդես էր գալիս որպես պատվիրատու:

Հասցեավորման գործընթացի կազմակերպումը նպատակահարմար չէ իրականացնել մրցույթի արդյունքում ծառայություններ ձեռք բերելու միջոցով, քանի որ այդ աշխատանքները հնարավոր է կազմակերպել առավել արդյունավետ՝ անշարժ գույքի կառավարման վարչության աշխատակիցների թվաքանակը համալրելու միջոցով:

Հասցեի տրամադրման գործընթացը կանոնակարգելու և աշխատանքերն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում ստեղծել նոր՝ «Անշարժ գույքի համարակալման, հաշվառման և վերլուծության» բաժին՝ վարչությունը համալրելով թվով 10 աշխատակիցներով:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**